ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի, N 50-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0086-0022 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.03956 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՍԱՄՎԵԼ ԳԱՌՆԻԿԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ ԵՎ ԱՐԱՄԱՅԻՍ ԳԱՌՆԻԿԻ ՓԵՐԻԽԱՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին և երրորդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 30-րդ կետի, 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» երրորդ, չորրորդ, 51-54-րդ, 56-րդ, և 59-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 163-րդ, 166-րդ և 202-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 14-րդ, 15-րդ, 19-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմնբերի 31-ի «ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմնբերի 29-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ, ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ԸՍՏ ԴՐԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ, ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և համաձայնությունը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991թ. մայիսի 15-ի թիվ 1 որոշումը (քաղվածք Օձուն համայնքի տնտեսությունների հաշվառման գրքից), հողամասի հատակագիծը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0086-0022 ծածկագրի տակ գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.03956 հեկտար մակերեսով, բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական

նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը օրինական կառուցված և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, 168.97 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան և դրան կից բնակելի նշանակության օժանդակ շինությունների (այսուհետ՝ անշարժ գույք) նկատմամբ վերականգնել հողհատկացման հիմքերը և այն օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ Սամվել Գառնիկի Փերիխանյանի՝ ծնված 14.06.1958թ. և Արամայիս Գառնիկի Փերիխանյանի՝ ծնված 19.04.1971թ. սեփականությունը:

2. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից՝ անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Օձուն, 18-րդ փողոց, թիվ 10 փոստային հասցեն:

3. Անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պայմանները, չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

4. Անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

5. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., հոկտեմբերի 16,
ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

16 հոկտեմբերի 2017 թվականի, N 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0052-0058 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0035 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԱԴԻԿ ՄԱԿԻՉՅԱՆԻՆ, ՄԱՆՈՒՇԱԿ ՎԱՀՐԱՄՅԱՆԻՆ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԿՈՄԵՇՈՎԱՅԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 3-րդ, 44-րդ, 45-րդ, 51-րդ, 52-րդ հոդվածների, 64-րդ հոդվածի 8-16-րդ կետերի, 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 69-րդ հոդվածի, 118-րդ հոդվածի 5-րդ մասի, 189-րդ, 198-րդ և 202-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մարտի 30-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՖՈՆԴԻ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԵՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 311-Ն որոշման «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետի «բ» ենթակետի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ավագանու 2017 թվականի հոկտեմբերի 13-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 06-112-0052-0058 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0035 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 40-Ա որոշման՝

որոշում եմ.

հիմք ընդունելով քաղաքացիների դիմումը, հողամասի հատակագիծը, 15.07.2014թ. «Թումանյանի» նոտարական տարածքի նոտար Արծրունի Մաղաքյանի կողմից Ալեքսանդրա Մակեդոնովնա Կոմեշովային տրամադրած ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Հայաստանի Հանրապետության Թումանյանի ժողովրդական պատգամավորների գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի, 20.02.1993թ. N 016 որոշումը և որոշման հավելված հանդիսացող Օձուն գյուղում «ՎԱՐԴ» կոոպերատիվին հատկացվող տեղանքի հատակագիծը, «ՎԱՐԴ» արտադրական կոոպերատիվի կանոնադրությունը, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պետական ռեգիստրի Թումանյանի Տ/Բ-ի կողմից 30.12.2002թ. տրամադրված «Իրավաբանական անձի լուծարման մասին» տեղեկանքը, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի «ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ» 13/09/2017թ. N Կ-08/09/2017-36-0011 որոշումը, առաջնորդվելով Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 118-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով առ այն, որ կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքը բաշխվում է նրա անդամների միջև՝ կոոպերատիվի կանոնադրությանը համապատասխան, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ «ՎԱՐԴ» արտադրական կոոպերատիվի լուծարումից հետո մնացած գույքը հանդիսանում է նրան Օձուն համայնքում գործունեություն իրականացնելու համար տրամադրված հողամասը, որը փաստացի օգտագործվում է «ՎԱՐԴ» արտադրական

կոոպերատիվի հիմնադիրներ (անդամներ) Լադիկ Վոլոդյայի Մակիչյանի, Մանուշակ Եղիշեի Վահրամյանի և Ալեքսանդրա Մակեդոնովնա Կոմեշովայի կողմից՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի սեփականությունը հանդիսացող, գ. Օձուն 5-րդ փողոց, թիվ 32/1 հասցեում գտնվող, 06-112-0052-0058 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0035 հեկտար մակերեսով փաստացի առկա, սահմանազատված հողամասը (այսուհետ՝ անշարժ գույք) ուղղակի վաճառքի կարգով օտարել այն փաստացի օգտագործողներին՝ «ՎԱՐԴ» արտադրական կոոպերատիվի հիմնադիրներ (անդամներ) Լադիկ Վոլոդյայի Մակիչյանին, Մանուշակ Եղիշեի Վահրամյանին և Ալեքսանդրա Մակեդոնովնա Կոմեշովային, անշարժ գույքի՝ վճարման պահին գործող, կադաստրային արժեքով՝ 11970 (տասնմեկ հազար ինն հարյուր յոթանասուն) ՀՀ դրամով (ՀՀ Լոռու մարզի Օձունի համայնքապետարան, հողերի օտարման եկամտային հաշիվ՝ 900265139353):

2. Անշարժ գույքը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքը ուղղակի վաճառքով օտարելու դեպքում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

2) Համայնքի հողերի օգտագործման սխեմայով կամ գլխավոր հատակագծով անշարժ գույքը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար:

3. Անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

4. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

5. ՈՒԺը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավարի 2017 թվականի հունիսի 5-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0052-0058 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0035 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԼԱԴԻԿ ՄԱԿԻՉՅԱՆԻ, ՄԱՆՈՒՇԱԿ ՎԱՀՐԱՄՅԱՆԻ ԵՎ ԱԼԵՔՍԱՆԴՐԱ ԿՈՄԵՇՈՎԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 21-Ա որոշումը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՏԻՏԱՆՅԱՆ

2017թ., հոկտեմբերի 16,
ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ

18 հոկտեմբերի 2017 թվականի, N 52-Ա

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0088-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0.0401 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԱՌԿԱ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ԱՐԱՐԱՏ ՀԱԽԻՆՅԱՆԻ, ՆԱԶԻԿ ՀԱԽԻՆՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ՀԱԽԻՆՅԱՆԻ, ԳՅՈՒԼՆԱՐԱ ՀԱԽԻՆՅԱՆԻ ԵՎ ՌՈՄԱՆ ՀԱԽԻՆՅԱՆԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի առաջին և երրորդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 30-րդ կետի, 42-րդ և 43-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» երրորդ, չորրորդ, 51-54-րդ, 56-րդ, և 59-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 10-րդ, 163-րդ, 166-րդ և 202-րդ հոդվածների, «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 14-րդ, 15-րդ, 19-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. դեկտեմնբերի 31-ի «ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 867 որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմնբերի 29-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԵՎ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ ՆԵՐԲՆԱԿԱՎԱՅՐԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ, ԱՆՎԱՆԱՓՈԽՄԱՆ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ՝ ԸՍՏ ԴՐԱ ԳՏՆՎԵԼՈՒ ԵՎ (ԿԱՄ) ՏԵՂԱԿԱՅՄԱՆ ՎԱՅՐԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ, ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՈՒ ՀԱՍՑԵՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 2387-Ն որոշման՝

որոշում եմ.

հաշվի առնելով այն հանգամանքը, որ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար փաստացի առկա սահմանազատված հողամասի նկատմամբ չեն պահպանվել սահմանված կարգով տրամադրված քաղաքաշինական գործունեություն իրականացնելու փաստաթղթերը, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները և համաձայնությունը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 1991թ. մայիսի 15-ի թիվ 1 որոշումը (քաղվածք Օձուն համայնքի տնտեսությունների հաշվառման գրքից), հողամասի հատակագիծը՝

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Օձուն համայնքի կադաստրային քարտեզի 06-112-0088-0007 ծածկագրի տակ գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0401 հեկտար մակերեսով, բնակելի տան կառուցման և

սպասարկման համար նախատեսված, փաստացի առկա սահմանազատված հողամասի և հողամասում գտնվող՝ այլ անձանց իրավունքները և օրենքով պաշտպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող, մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (կառուցված է 1970թ.) օրինական կառուցված և 19.07.2008 թվականի դրությամբ առկա, 175.9 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տան (այսուհետ՝ անշարժ գույք) նկատմամբ վերականգնել հողհատկացման հիմքերը և այն օրենքի ուժով համարել որպես սեփական գույքը տիրապետող ֆիզիկական անձանց՝ Արարատ Պետրոսի Հախինյանի՝ ծնված 02.12.1949թ., Նազիկ Տելեմակի Հախինյանի՝ ծնված 09.01.1951թ., Մարինե Արարատի Հախինյանի՝ ծնված 06.03.1972թ., Գյուլնարա Արարատի Հախինյանի՝ ծնված 15.07.1973թ. և Ռոման Արարատի Հախինյանի՝ ծնված 06.09.1987թ., սեփականությունը:

2. Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից՝ անշարժ գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, գյուղ Օձուն, 3-րդ փողոց, թիվ 18/1 փոստային հասցեն:

3. Անշարժ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պայմանները, չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների (ավտոճանապարհներ, երկաթգծեր, էլեկտրահաղորդակցության, ջրամատակարարման, ջրահեռացման, կապի ցանցեր, գազատարներ, ջրանցքներ) օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

1) Անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի խախտում այլ անձանց օրենքով պաշտպանվող շահերը, ինչպես նաև չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործմանը:

4. Անշարժ գույքի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով և այն հանդիսանում է սույն որոշման բաղկացուցիչ և անբաժանելի մասը:

5. Սույն որոշմամբ սահմանված անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և սույն որոշումից ծագող իրավունքները սահմանված կարգով պետական գրանցումից հետո վավեր են և գործում են Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՕՁՈՒՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ՏԻՏԱՆՅԱՆ**

2017թ., հոկտեմբերի 18,
ՀՀ Լոռու մարզ, գ. Օձուն